ՅՈՒՍԱՀԱՏԻ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

I

Նորից կը մարեմ կրակներս բոլոր,
Ու կը նստեմ ես մթնում մեն-մենակ,
Կ'ողբամ ապարդիւն իմ կեանքը մոլոր,
Կ'ողբամ ամէն ինչ՝ թէ՛ սէր, թէ՛ կրակ:

Անկատ, անտես, անանուն մի տեղ
Կուչ կը գամ, որ ինձ ոչ ոք չը տեսնի,
Որ տառապանքս ոչ ոք չիմանայ,
Ոչ ոք չը խղճայ, ոչ ոք չը կանչի:

Ինձ համար մեռաւ լուսեղ մի երազ,
Մի վառ արեգակ մարաւ առ յաւէտ.
Մի խաւար ստուեր իջել է վրաս,
Կորել են բոլոր տենչերս անհետ...

Կը մարեմ բոլոր կրակներս նորից,
Ու կը թաքնուեմ մթնում անկրակ,
Թո՛ղ որ չը գտնեն, թող չը կանչեն ինձ,
Թո՛ղ մեռնիմ մենա՜կ, թող մեռնիմ մենա՛կ...

II

Վշտիս բեռան տակ իմ կքուած հոգին,
Աշխարհի երգին անկամ ունկնդիր,
Կարօտ է քո մեղմ, անուշ զգուանքին:

Իջի՛ր, կը նայեմ ես հաշտ աչքերով
Քո գերանդիի սուրսայր պողպատին,
Քէշդ կը բռնեմ անզօր ձեռքերով:

Իջի՛ր, թող ըզգամ սարսափի մի դող,
Ու լինեմ անցաւ, յաւիտեան հանգիստ,
Ո՛վ հզօրազո՛ր, ամենակարո՛ղ...

ԱՐԱՄ ԳԱՌՕՆԻ

ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐԲԻՍ

Գրեց՝ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՔԵՄԱԼԻԶՄԸ ժամանակակից մարդկութեան խղճմտանքի, քաղաքակրթութեան եւ միջազգային մօրալի դէմ ցցուած ամենէն արտաքոց եւ ամենէն նախատական փաստն է, որ երբ եւ իցէ տիեզերական պատմութիւնն արձանագրել է:

Նախատեսնում եմ առարկութիւնը. ապա բոլշեւի՞զմը:

Արդարեւ բոլշեւիզմ ու քեմալիզմ որոշ նմանութիւններ ունեն:

Երկուսն էլ ծնունդ առան երկրի աշխարհաւեր պատերազմից. երկուսն էլ մի մի խմբակի գործ են, յանդուգն ու ձեռներէց, արկածախնդիր ու անգութ, եւ այս պատճառով կարողացել են կորաքամակ ու մութ ամբոխների թիկունքին նստել եւ ամենախաւար դարերի հրէշաւոր բռնութիւնները կիրառել: Երկուսն էլ արեւմուտքի դէմ ըմբոստ՝ մասնաւոր հաճոյք են զգում ցինիկ լինել իրենց անպարփակ ու այլանդակ յաւակնութիւններով ու պոռոտախօս կեղծիքներով: Այս նմանութիւնները՝ սակայն աւելի արտաքին են եւ չեն բղխում ներքին էութիւնից:

Բոլշեւիզմը գործում է յանուն համայնավարութեան, որ հասարակագիտական մի վարդապետութիւն է վերջապէս, թէեւ այսօր վանիչ դարձած չնորհիւ այն հակամարդկային մեթոդներին, որոնք որքան վայրագ են ու հրէշաւոր, նոյնքան ըէակսիոներ են ու տգաղանիչ:

Բոլշեւիզմը մի սոցիալ-փիլիսոփայական կառուցուածքի թշուառ ծամածռումն է, մի տեսակ վերադարձ դէպի նախնական մարդը միայն օժտուած ժամանակակից տեխնիկայի վերջին կատարելագործութիւններով:

Բոլշեւիզմը ժխտումն է ժամանակակից քաղաքակրթութեան եւ ներբողիչ ու ջատագով նիւթի ու տեխնիկի ամենացասկոտ ու անհոգի արտայայտութիւնների:

Նա Homo Sapiens-ն է զինուած կայծակով, չոգիով եւ թունաւոր գազերով:

Քեմալիզմը չի բղխում որեւէ քաղաքա-